ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 394

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքը (Խաչաղբյուր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Վարդենիս համայնքի (Խաչաղբյուր բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքը (Խաչաղբյուր բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Գեղարքունիք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
05-044-0109-0001 կադաստրային ծածկագրով 0.19879 հա և 05-044-0109-0152 կադաստրային ծածկագրով 0.08012 հա մակերեսներով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	05-044-0109-0001 կադաստրային ծածկագրով 0.19879 հա և 05-044-0109-0152 կադաստրային ծածկագրով 0.08012 հա մակերեսներով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ապահովելով՝ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից ներկայացված պայմանը (կցվում է):

4. ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի համայնքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Խաչաղբյուր բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Խաչաղբյուր բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե. Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ. Առաքելյան

Երևան, « 9 » «դեկտեմբերի» 2025 թ.